# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 29-Ա, 30-Ն, 31-Ա, 33-Ա, 35-Ա ԵՎ 36-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 30-Ն որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիրը սխալ է գրառված:

Թիվ թիվ 30-Ն և 31-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

Թիվ 31-Ա որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և 34-րդ հոդվածի 4-րդ մասին կատարված հղումները սխալ են:

Թիվ 33-Ա որոշման նախաբանում ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին կատարված հղումը սխալ է (նշված հոդվածի 1-ին մասը 1-ին և 2-րդ կետեր չունի):

Թիվ թիվ 29-Ա, 35-Ա և 36-Ա որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը:

*Կատարող՝ Շ. Շաքարյանց*
*15.07.2020թ.*